ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռումինիայի Կառավարությունը, այսուհետև՝ «Կողմեր»,

ելնելով 1994թ. սեպտեմբերի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռումինիայի Կառավարության միջև գիտության, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում համագործակցության վերաբերյալ» համաձայնագրի 15-րդ հոդվածից,

ղեկավարվելով մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում համագործակցության ընդլայնման ու զարգացման ընդհանուր ցանկությամբ,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

I. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏ

Հոդված 1

Կողմերը կխրախուսեն թատրոնի, երաժշտության, կերպարվեստի, ոչ նյութական մշակութային ժառանգության, պատմության, թանգարանային գործի, թանգարանային և ճարտարապետության ուսուցման բնագավառներում համագործակցությունը և այդ բնագավառների գործիչների ու մասնագետների փոխանակումը:

Հոդված 2

Կողմերը կկազմակերպեն սեմինարներ՝ նվիրված Հայաստանում և Ռումինիայում մշակութային ժառանգության ոլորտում գործող օրենսդրությանը:

Հոդված 3

Կողմերը համագործակցության ծրագիր կիրականացնեն Ռումինիայի տարածքում գտնվող հայկական գերեզմանոցների ժառանգության արժեքների ցուցակագրման ու գերեզմանաքարերի արձանագրությունների վերծանման և հրապարակման, այդ թվում, եռալեզու կատալոգի՝ հայերեն և ռումիներեն լեզուներով, ինչպես նաեւ աշխարհում առավել գործածվող որևէ լեզվով հրապարակման համար:

Հոդված 4

Կողմերը համատեղ ջանքերով կնախաձեռնեն ռումինահայ համայնքի զարգացման պատմության հետ կապված պատմական հուշարձանների ցուցակագրման ծրագիր:

Հոդված 5

Կողմերը կփոխանակեն իրենց երկրների պատմամշակութային ժառանգությանը վերաբերող ցուցահանդես, ընդ որում դրա հետ կապված կազմակերպչական և ֆինանսական պայմանները կկանոնակարգեն հատուկ պայմանագրով:

Հոդված 6

Կողմերը կիրականացնեն համագործակցության ծրագիր ազգային մշակութային ժառանգության պահպանության և պաշտպանության բնագավառների հաստատությունների միջև՝ աջակցելով յուրաքանչյուր երկրի մյուսի տարածքում գտնվող մշակութային հուշարձանների հետազոտման, փաստաթղթավորման և պահպանման հարցերում:

Հոդված 7

Կողմերը կիրականացնեն կինոյի բնագավառում ուղղակի համագործակցության ծրագիր, մասնավորապես.

ա/ կինոարխիվների միջև տեղեկատվության և տեսալսողական նյութերի փոխանակում,

բ/ մասնագետների փոխանակում,

գ/ մասնակցություն փառատոներին,
դ/ փոխադարձության հիման վրա հայկական և ռումինական կինոյի շաբաթների կազմակերպում:

Հոդված 8

Կողմերը համագործակցության ծրագիր կիրականացնեն երաժշտության և պարարվեստի բնագավառում, մասնավորապես.
ա/ կփոխանակեն տեղեկատվություն իրենց տարածքներում անցկացվող միջազգային ազգագրական փառատոների ու մրցույթների մասին և կխրախուսեն մշակութային գործակալների կողմից իրականացվող կապերը,
բ/ տեղեկատվություն և փոխադարձ հրավերներ կփոխանակեն իրենց տարածքներում անցկացվող երաժշտական, բալետային և պարային միջազգային միջոցառումների վերաբերյալ,
գ/ կփոխանակեն տեղեկատվություն՝ ավանդական արհեստների վերաբերյալ և կկազմակերպեն երկու երկրների ժողովրդական արհեստագործների փոխանակում:

Հոդված 9

Կողմերը կհամագործակցեն Եվրոպայի խորհրդի առաջարկած մշակութային ծրագրերի շրջանակներում:

Հոդված 10

Կողմերը համագործակցության ծրագիր կիրականացնեն թանգարանային գործի և պատմամշակութային ժառանգության պահպանության բնագավառներում, մասնավորապես.

ա/ կխրախուսեն առանձին թանգարանների միջև ուղղակի կապերը, փոխադարձության հիման վրա կկազմակերպեն ցուցահանդեսներ և կստեղծեն գրադարաններ,

բ/ կխրախուսեն հնագիտական պեղումների համար համատեղ արշավախմբերի կազմավորումը, ինչպես նաև այս ոլորտում մասնագետների փոխանակումները,

գ/կփոխանակեն մասնագիտական գրականություն և փորձագետներ թանգարանային գործի և թանգարանային կառավարման, հնագիտության և պահպանման-վերականգնողական աշխատանքների բնագավառներում:

Հոդված 11

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը լուսանկարիչների մասնագիտացված ընկերությունների միջև և կաջակցեն ֆոտովավերագրական ու գեղարվեստական լուսանկարչության ցուցահանդեսների փոխանակմանը:

Հոդված 12

Կողմերը կաջակցեն երկու երկրների գրադարանների միջև ուղղակի համագործակցության հաստատմանը, որի շրջանակներում կփոխանակեն մասնագետներ, տեղեկատվական նյութեր և գրականություն:

II. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հոդված 13

Կողմերը կիրականացնեն համագործակցություն և փորձի փոխանակում կրթության բնագավառում՝ փոխանակելով իրենց կրթական համակարգերի կառուցվածքի, բովանդակության և կազմակերպման, ուսումնական պլանների և ծրագրերի, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ժողովածուների, տեխնիկական միջոցների, ուսումնական մեթոդիկայի, պարբերականների և այլ մասնագիտացված գրականության մասին տեղեկություն:

Այդ նպատակով Կողմերը կկազմակերպեն փորձագետների փոխանակումներ՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Հոդված 14

Կողմերը կխրախուսեն ուղղակի համագործակցությունը երկու երկրների միջնակարգ և ավագ դպրոցների միջև:

Կողմերը կփոխանակեն տեղեկատվություն միջնակարգ և ավագ դպրոցների միջև՝ մայրենի լեզվի և օտար լեզուների ուսուցմանը վերաբերվող ուսումնական ծրագրերի և այլ փաստաթղթերի մասին:

Հոդված 15

Կողմերը կխրախուսեն ուղղակի պայմանագրերի կնքումը բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև:

Հոդված 16

1) Ռումինական Կողմը յուրաքանչյուր տարի կտրամադրի
ա) 3 կրթաթոշակ բուհական ուսուցման համար (բակալավրիատ),
բ) 3 կրթաթոշակ բուհական ուսուցման համար (մագիստրատուրա)
գ) 2 կրթաթոշակ հետբուհական ուսուցման համար (ասպիրանտուրա)
դ) 30 ամսվա կրթաթոշակներ մասնագիտական դասընթացների համար՝ յուրաքանչյուր անձի համար 3-9 ամիս ժամանակահատվածների բաժանելու հնարավորությամբ,
ե) 3 կրթաթոշակ ռումիներեն լեզվի, գրականության եւ քաղաքակրթության ամառային դասընթացներին մասնակցելու համար,

(2) ա, բ և գ կետերում նշված կրթաթոշակների այն շահառուները, որոնք չեն տիրապետում ընդունող երկրի լեզվին, կներգրավվեն ռումիներեն լեզվի նախապատրաստական դասընթացներին.

(3) դ եւ ե կետերում նշված փոխանակումների համար, ռումիներեն կամ աշխարհում այլ առավել գործածվող լեզվին տիրապետելը նախապայման է հանդիսանում ուսմանը ներգրավվելու համար

(4) Հայկական Կողմը յուրաքանչյուր տարի կտրամադրի
ա) 3 կրթաթոշակ բուհական ուսուցման համար (բակալավրիատ),
բ) 3 կրթաթոշակ բուհական ուսուցման համար (մագիստրատուրա)
գ) 2 կրթաթոշակ հետբուհական ուսուցման համար (ասպիրանտուրա)

5) ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ (ԵՊՀ և ԵՊԼՀ) ռումիներեն լեզվի, գրականության և պատմության ուսումնասիրություն:

Հոդված 17

Կողմերը կշարունակեն խրախուսել Հայաստանում ռումիներեն լեզվի, գրականության և ռումինագիտության ուսումնասիրությունը Երևանի պետական բարձրագույն ուսումնական հաստատությունում ռումիներեն լեկտորատի (դասախոսական կազմի) գործունեության միջոցով և, համապատասխանաբար, Ռումինիայում հայոց լեզվի, գրականության և հայագիտության ուսումնասիրությունը Բուխարեստի բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկում լեկտորատի (դասախոսական կազմի) գործունեության միջոցով:

Հոդված 18

Կողմերը ուսուցման կընդունեն երկու երկրների պետական ուսումնական հաստատությունների բոլոր մակարդակներում պաշտոնական ներկայացուցիչ հանդիսացող հաստատությունների՝ դեսպանությունների, հյուպատոսական հիմնարկների, մշակութային կենտրոնների, լեզվի, գրականության և քաղաքակրթության ուսուցում իրականացնող դասախոսական կազմի, նույն կատեգորիայի այլ կազմակերպությունների անձնակազմին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին՝ երկրներում գործող օրենսդրություններին համաձայն:

Հոդված 19

Կողմերը կփոխանակեն իրենց երկրների պատմության, աշխարհագրության, ինչպես նաև տնտեսական և քաղաքական զարգացման վերաբերյալ վավերագրական նյութեր՝ երկու պետությունների դասագրքերում և հանրագիտարաններում տվյալ բնագավառները հանգամանորեն ներկայացնելու նպատակով:

III. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հոդված 20

Կողմերը կխրախուսեն համագործակցության զարգացումը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Ռումինիայի գիտությունների ակադեմիայի միջև գիտական համագործակցության վերաբերյալ ուղղակի համաձայնագրի հիման վրա:

Հոդված 21

(1) Կողմերը կխրախուսեն համագործակցության զարգացումը գիտահետազոտության բնագավառում, ելնելով 1994թ. սեպտեմբերի 20-ին Բուխարեստում ստորագրված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարության և Ռումինիայի հետազոտության և տեխնոլոգիայի նախարարության միջև գիտական և տեխնոլոգիական համագործակցության մասին» համաձայնագրից:

(2) Կողմերը կփոխանակեն տեղեկատվություն գիտության և տեխնոլոգիաների բնագավառներում: Այդ նպատակով նրանք կհրավիրեն երկու պետությունների ներկայացուցիչների՝ համագումարներին, համաժողովներին, գիտաժողովներին և այլ միջազգային գիտական միջոցառումներին մասնակցելու նպատակով:

(3) Մասնակցության պայմանները կհստակեցվեն յուրաքանչյուր դեպքի համար:

(4) Կողմերը նաև կնպաստեն համատեղ գիտատեխնիկական նյութերի հրատարակմանը:

Հոդված 22

Կողմերը կխրախուսեն գերակա բնագավառներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ գիտահետազոտական նախագծերի իրականացումը, այդ թվում նաև միջազգային ծրագրերում:

IV. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏ

Հոդված 23

Կողմերը կխրախուսեն երիտասարդության ոլորտում համագործակցության զարգացմանը՝ երկու երկրների երիտասարդական կազմակերպությունների միջև ուղիղ կապերի հաստատման, համատեղ ծրագրերի մշակման ու իրականացման, ինչպես նաև տեղեկության և ներկայացուցիչների փոխանակման միջոցով:

Հոդված 24

(1) Կողմերը կխրախուսեն երկու երկրների սպորտային ֆեդերացիաների և ակումբների, սպորտի բնագավառի կազմակերպությունների և հաստատությունների միջև գոյություն ունեցող փոխանակումները:

(2) Միջոցառումները և դրանց իրականացման պայմանները ուղղակիորեն կիրագործեն շահագրգիռ հաստատությունները:

V. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

Հոդված 25

Կողմերը կնորացնեն Հայաստանի և Ռումինիայի հեռուստատեսությունների միջև կնքված առկա պայմանագիրը: Նոր պայմանագիրը կնպաստի նորությունների փոխանակումների, ինչպես նաև, առևտրային հիմունքներով, երկու պետությունների քաղաքական, սոցիալական, տնտեսական եւ մշակութային ասպեկտների վերաբերյալ նյութերի փոխանակումների:

Հոդված 26

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը երկու երկրների մամուլի, համապատասխանաբար՝ ARMENPRES–ի և AGERPRES–ի, ազգային մարմինների միջև: Մասնագիտական համագործակցությունը վերաբերում է տեղեկատվության, մամուլի լուսանկարների փոխանակումների ու լրագրողների և փորձագետների միջև փորձի փոխանակումների՝ տեխնիկական, մարկետինգի և այլ բնագավառներում, համաձայն երկու երկրների գործակալությունների միջև համագործակցության մասին արձանագրությունների:

Հոդված 27

Կողմերը կխրախուսեն անմիջական համագործակցությունը պետական ռադիոյի հեռարձակող կայանների միջև, նպատակ ունենալով՝ խթանել երկու ժողովուրդների փոխադարձ իմացությանը, ընդլայնել

երկկողմ համագործակցությունը և բարձրացնել մշակութային փոխանակումների հնարավորությունը:

VI. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հոդված 28

Եթե այլ բան նախատեսված չէ, անձանց փոխանակման ծախսերը կկատարվեն հետևյալ պայմաններով՝

ա) մինչև մյուս պետության մայրաքաղաք մեկնելու և վերադառնալու համար միջազգային տրանսպորտային ծախսերն իր վրա է վերցնում ուղարկող Կողմը,

բ) ընդունող Կողմը իր վրա է վերցնում ներքին փոխադրումների, կեցության և սննդի ծախսերը՝ երկրի ներքին օրենսդրության համաձայն,

գ) ընդունող Կողմը ապահովում է անվճար բուժօգնություն բժշկական և վիրաբուժական արտակարգ իրավիճակների և համաճարակային հիվանդությունների դեպքերում՝ երկրի ներքին օրենսդրության համաձայն:

Հոդված 29

Հոդված 13-ով նախատեսված անձանց փոխանակման դեպքում մինչև մյուս պետության մայրաքաղաք մեկնելու և վերադառնալու համար միջազգային տրանսպորտային ծախսերն իր վրա է վերցնում ուղարկող Կողմը, իսկ ընդունող Կողմը կապահովի կեցությունը, սնունդը, ծրագրի կազմակերպումը, թարգմանչի ներկայությունը (անհրաժեշտության դեպքում), ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներքին փոխադրամիջոցը և անվճար բուժօգնությունը՝ բժշկական և վիրաբուժական արտակարգ իրավիճակների և համաճարակային հիվանդությունների դեպքերում, երկրի ներքին օրենսդրության համաձայն:

Հոդված 30

Հոդված 16-ով նախատեսված կրթաթոշակներ ստացողների համար, ընդունող Կողմը կառաջարկի ամենամսյա կրթաթոշակ, երկրում

սահմանված նորմերի համաձայն, կազատի ուսման վարձերից, մուտքի թույլտվություն ուսանողական ճաշարանների եւ հանրակացարանների համար, անվճար բուժօգնություն բժշկական և վիրաբուժական արտակարգ իրավիճակների և համաճարակային հիվանդությունների դեպքերում՝ երկրի ներքին օրենսդրության համաձայն:

Հոդված 31

Ընդունող Կողմը ամառային դասընթացների մասնակիցներին առաջարկում է՝

ա) ազատում գրանցման վճարներից,

բ) անվճար կեցություն և սնունդ

գ) անվճար բուժօգնություն բժշկական և վիրաբուժական արտակարգ իրավիճակների և համաճարակային հիվանդությունների դեպքերում՝ երկրի ներքին օրենսդրության համաձայն,

դ) անվճար ուսուցողական էքսկուրսիաներ:

Հոդված 32

Հոդված 17-ով նախատեսված դասախոսների համար, ընդունող Կողմը կառաջարկի ամսական աշխատավարձ՝ երկրի նույն կրթական աստիճան և աշխատանքային փորձ ունեցող դասախոսների աշխատավարձին համարժեք, համապատասխան պայմաններով անվճար բնակարան՝ ընդունող ուսումնական հաստատությունների կողմից առաջարկվող վայրերում, անվճար բուժօգնություն բժշկական և վիրաբուժական արտակարգ իրավիճակների և համաճարակային հիվանդությունների դեպքերում՝ երկրի ներքին օրենսդրության համաձայն և անվճար կացության իրավունք:

Հոդված 33

Յուրաքանչյուր տարի մինչև մայիսի 1-ը Հոդված 16-ով նախատեսված կրթաթոշակների թեկնածուների փաթեթները կտրամադրվի Ընդունող Կողմին: Ընտրության արդյունքները պետք է փոխանցվեն դասընթացները սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ:

Թեկնածուների փաթեթները պետք է բաղկացած լինեն հետևյալ փաստաթղթերից՝

ա. ուսման լրիվ դասընթացների համար՝ բուհական (բակալավրիատ, մագիստրատուրա) և հետբուհական (ասպիրանտուրա) ուսման համար

I) անձնագրի՝ անձնական տվյալներ պարունակող էջի պատճենը,
II) ծննդյան վկայականի պատճենը՝ նոտարի կողմից վավերացված անգլերեն թարգմանությամբ և լեգալիզացված (ապոստիլ),
III) ուսման մասին փաստաթղթերի՝ դիպլոմի և դիպլոմի հավելվածի պատճենները՝ նոտարի կողմից վավերացված անգլերեն թարգմանությամբ և լեգալիզացված (ապոստիլ), հայցվող ուսման տեսակից կախված դիմորդներին բուհական (բակալավրիատ, մագիստրատուրա) և հետբուհական (ասպիրանտուրա) ուսման համար գրանցելու նպատակով,
IV) բժշկական տեղեկանք, որը պարունակում է բժշկական անհրաժեշտ տվյալներ առ այն, որ դիմորդը որևէ վարակիչ հիվանդության վարակակիր չէ,
V) դիմումի ձև՝ ուսուցման բնագավառի և համալսարանի նշումներով.

բ. մասնագիտացման դասընթացների համար՝

I) անձնագրի՝ անձնական տվյալներ պարունակող էջի պատճենը,
II) ուղարկող հաստատության կողմից երաշխավորական նամակ,
III) ուսումնական ծրագիր,
IV) բժշկական տեղեկանք, որը պարունակում է բժշկական անհրաժեշտ տվյալներ առ այն, որ դիմորդը որևէ վարակիչ հիվանդության վարակակիր չէ,
V) դիմումի ձև, ուսուցման բնագավառի և համալսարանի նշումներով.

գ. ամառային դասընթացների համար՝

I) անձնագրի՝ անձնական տվյալներ պարունակող էջի պատճենը,
II) ամառային դասընթացներին մասնակցելու համար դիմումի ձև՝ նախընտրած համալսարանի նշումով,
III) երաշխավորական նամակներ ինչպես ուղարկող հաստատության, այդպես էլ ընդունող պետության դեսպանության կողմից,
IV) պատճառաբանական (մոտիվացիոն) նամակ,
V) բժշկական տեղեկանք, որը պարունակում է բժշկական անհրաժեշտ տվյալներ առ այն, որ դիմորդը որևէ վարակիչ հիվանդության վարակակիր չէ:

Հոդված 34

Կողմերը իրենց պետության տարածքում կապահովեն մյուս Կողմի քաղաքացիներ հանդիսացող ասպիրանտների և մագիստրոսների համար պայմաններ՝ երկու պետությունների համապատասխան նախարարությունների ենթակայության տակ գտնվող բարձրագույն ուսումնական հաստատություններում իրենց թեզերը/ատենախոսությունները ներկայացնելու համար:

Ասպիրանտների և մագիստրոսների կողմից թեզերի/ատենախոսությունների ներկայացման ասպեկտները կկարգավորվեն հետեւյալ կերպ՝

ա) մինչև մյուս պետության մայրաքաղաք մեկնելու և վերադառնալու համար միջազգային տրանսպորտային ծախսերն իր վրա է վերցնում ուղարկող Կողմը կամ ասպիրանտներն և մագիստրոսները.
բ) թեզերի/ատենախոսությունների ներկայացման երկրում ներքին տրանսպորտային ծախսերը հոգում են ասպիրանտներն և մագիստրոսները.

գ) ընդունող Կողմը կառաջարկի՝

I) ուսանողական հանրակացարաններից և ճաշարաններից օգտվելու թույլտվություն՝ տեղացի ուսանողների համար նախատեսված պայմաններով,
II) ընդունող բարձրագույն կրթության հաստատության նյութատեխնիկական բազայից օգտվելու թույլտվություն՝ տեղացի ասպիրանտների և մագիստրոսների համար նախատեսված պայմաններով,
III) անվճար կացության իրավունք,
IV) անվճար բուժօգնություն բժշկական և վիրաբուժական արտակարգ իրավիճակների և համաճարակային հիվանդությունների դեպքերում՝ երկրի ներքին օրենսդրության համաձայն:

Հոդված 35

Ցուցահանդեսների կազմակերպման ծախսերը կկատարվեն հետևյալ պայմաններով՝

ա) ուղարկող Կողմն իր վրա է վերցնում ցուցանմուշների ապահովագրման և մինչև ընդունող Կողմի պետության մայրաքաղաք տանելու և վերադարձնելու փոխադրման ծախսերը,
բ) ընդունող Կողմն իր վրա է վերցնում տրանսպորտային ծախսերը երկրի ներսում, կազմակերպչական ծախսերը և գովազդը,
գ) ընդունող Կողմն իր վրա է վերցնում իր երկրի տարածքում ցուցահանդեսների անվտանգությունը՝ համաձայն Կողմերի համապատասխան հաստատությունների միջև կնքված հատուկ պայմանագրի:

Հոդված 36

Սույն Ծրագիրը չի բացառում այլ միջոցառումների ու փոխանակումների իրականացման հնարավորությունը, այդ թվում, առանձին դեպքերում, Կողմերի համաձայնությամբ պայմանով, որ ընդունող Կողմը իր վրա է վերցնում համապատասխան ծախսերը:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 37

Սույն Ծրագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է հինգ տարի:

Ստորագրված է ք. Բուխարեստում 2011 թվականի սեպտեմբեր 8-ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, ռումիներեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:
Մեկնաբանման ընթացքում որևէ տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	**ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**